



ԱՕԳԷ ԾԱՌԱՅ ՅԻ ՔԻ ՈՂՈՐՄՈՒԻՄԱՄԲԼ ԱՅ ԵՒ ԿԱՍՕՔԼ ԱՕԳԻՍ.
ԵՂԻՍԿՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՌՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿԸ ՀԱՄԱՕԳՐԱԿԱՆ ՆԱԽԱԵԾՈՒ ԱՌՈՒՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԼ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱՌՈՒԿԵ ԷԶՄՒԱԾԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ
 ԵՐՈՒՍԱԳԷՄԻ՝ ՏԵԱՌՆ ԵՂԻՑԷԻ ՍՐԲԱԶԱՆ
 ԱՐՔԵՊԻՍԿՊՈՍԻՆ ԲՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ
 ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ս. Երուսաղէմ

Բաղքը զգացումներով ընդունեցինք Ձեր 12 Յուլիս 1972 թուակիր նա-
 մակը, որով Մեզի կը ներկայացնէիք սուրբ Աթոռիդ երկու եպիսկոպոսներու՝
 Գերաշնորհ Տ. Նորայր Պողարեան եւ Տ. Ծահէ Աճեմեան սրբազան հայրերու
 երկար տարիներու անխոնջ ծառայութիւնը եւ բեղուն գործունէութիւնը, առա-
 ջարկելով որ Մեր հայրապետական գնահատանքը արտայայտենք «արքու-
 թեան» պատիւ շնորհելով անոնց:

Արդարեւ, Տ. Նորայր եւ Տ. Ծահէ սրբազան հայրերը ծանօթ են մեր ամ-
 բողջ եկեղեցիին ու ժողովուրդին իրենց նուիրեալ կեանքով, իրենց փայլուն
 շնորհներով, իրենց մատենագիտական, գրական ու կրթական վաստակով,
 որով Մեր անկեղծ գնահատանքի առարկան կը հանդիսանան:

Արդ, Մենք սիրով կ'ընդատաջենք Ձեր առաջադրանքին եւ Տ. Նորայր
 Եպիսկոպոս Պողարեանին ու Տ. Ծահէ Եպիսկոպոս Աճեմեանին կը շնորհենք

«արքութեան» պատիւ, մաղթելով որ սրբազան հայրերը, այժմ արքեպիսկոպոսներ, քաջատոյջ ապրին ու գործեն մինչեւ խոր ծերութիւն, միշտ ծառայելով մեր սուրբ եկեղեցիին, միշտ ծառայելով առաքելական ձեր սուրբ Աթոռին, միշտ ծառայելով հայ մատենագրութեան եւ դպրութեան:

Այս երջանիկ առիթով, սիրեցեալ Եղբայր Մեր, թոյլ տուէք շնորհատրել Գերդ Ամենապատուութիւնը, մաղթելով սրտաբոխ, որ յաւիտ անասան մնայ հայ Երոսաղէմը եւ Դուք տակաւին երկար, շատ երկար տարիներ շարունակէք Ձեր առաքելութիւնը, Ձեզի յատուկ վճիտ ու վճնական ոգիով:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով՝ գօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հոռմ. ԺԵ 13), ամէն:

Ստանա կոնդակս ի 12-ը Սեպտեմբերի
1973 փրկչական ամի,
ի տումարիս հայոց ՌՆԻԲ,
Պայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 753



Yusuf...
ՄԱՍԻՆԻՆԻ ԳԱՏՐԻԱՎԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՍՄԵՆԱՅԵՆ 1968